

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
DEPARTMENT OF INFORMATION AND PUBLIC RELATIONS

Չորեքշաբթի, 22 սեպտեմբերի 2021թ.

**«Հետք» թերթի լրագրող
Արմեն Միրզոյանին**

Հարգելի պարոն Միրզոյան,

ի պատասխան Ձեր 08.09.2021թ. հարցման՝ հայտնում ենք հետևյալը.

Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների վերադարձի շուրջ բանակցությունները վարվում են ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից:

Գործընթացի առանձնահատկությունների հետ կապված որևէ պետական մարմնի կողմից նման բնույթի հաղորդագրություն տարածելը տվյալ պարագայում գտնվել է ոչ նպատակահարմար, և համապատասխան տեղեկատվությունը տրամադրվել է «Արմենպրես» լրատվական գործակալությանը:

Գերիների փոխանակման և վերադարձի վերաբերյալ բանակցությունների առանձնահատկություններով պայմանավորված՝ դրանց մանրամասները հրապարակման ենթակա չեն:

Հայ երկու գերիների վերադարձը Հայաստան կազմակերպվել է Արցախում խաղաղապահ առաքելություն իրականացնող ՌԴ զորախմբի հրամանատարության կողմից:

Կատարող՝ Ազգային անվտանգության ծառայություն



**Վարչության պետ
Արմեն Խաչատրյան**